

ցուցեր եւ կրակի եմ տուեր շատ մը գրքեր: (Թորոս Աղբ.):

*

Կը յիշեմ յիմար սովորութիւն մըն ալ հայ բնաշխարհի ինչ ինչ վայրերուն մէջ, ըստ որում երբ քահանայ մը մեռնէր, նրա հետ կը քաղէին մի գրչագիր մատեան (Գ. Եպ. Սըրուանձ. Հնոց եւ Նորոց):

ԳՐԶԱԳԻՐ Ս. ԳԻՐՔԵՐԸ

ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՍՐԻԿԱՅԱԿԱՆ ԶԵՒ ՄԸ

Թուրքերը, զիտնալով որ հայերը իրենց սուրբ գիրքերու հանդէպ պաշտում ունին, թալանէն ետք չեն կորսնցուցած զանոնք, այլ փրկանքի գին առնելով վերադարձուցած են:

Աստուած զիտէ, թէ մեր ձեռք գտնուած գրչագիրներէն քանինքը քանի՛ քանի՛ անգամ նորէն ազատուեր են գերութենէ:

*

Շատ անարժան պաշտօնեաներ ալ, իրենք գողցեր, գրաւ դրեր, ծախեր եւ կամ իրենց սիրելիներուն նուիրեր են եկեղեցապատկան մատենաներ:

Գ. Եպ. Սրուանձ., Տիւրիկի ձեռագիրներու մասին խօսելէ ետք, կ'ըսէ. «Կային նաեւ շատ մաշթոց, ձաշոց, Գանձարան, Աւետարան եւայլն, մեռեալ եւ փտեալ վիճակի մէջ անխնամ ձգուած»:

*

Զմշկածաղի Տէր Գրիգոր հայրը «բեռ մը ձեռագիր տարած է Յաղթուկ գիւղէն»:

ԳՐԶԱԳԻՐ ՍՏԱՅՈՂՆԵՐՈՒՆ

ՄՄՍՆԱԻՈՐ ՅԱՆԶՆԱՐԱՐԱԿԱՆ

«Ով որ զպատուէրքս ի տեղ պահէ եւ խնամով եւ լաթով բռնէ եւ ձէթ եւ մոմ չկաթեցուցանէ, օրհնի յԱստուծոյ եւ ամենայն սըրբոց. ամէն.»:

*

«Ով որ խնամ անէ եւ յամենայն վնասակար իրաց պահէ զգուշութեամբ, սրբոյն փառացն մասնակցեցի» (Կես. Զեռ. 10, Արտ. Պալեան, էջ 57):

*

«Աստուած զայն քահանայն օրհնէ որ լաւ

պահէ զսուրբ աւետարանս ի դէճ տեղացէ եւ այլ յորոգայթէ, եւ լաւ պահողն օրհնի յԱստուծոյ» (Վասպ. Զեռ. Ե. Լալա. էջ 974):

*

«Գիրք եւ Աւետարան Աստուած անուանի, զի պահարան զրոցն կտրել, շատ թերի եւ անհաւատ մարդ կին է, աղաչեմ զձեզ մի առնեք զայդ» (Վասպ. Զեռ. Ե. Լալա., էջ 494):

*

«Ընթերցողք սուրբ աւետարանիս, լաւ եւ սուրբ պահեցէք եւ մոմն ի մէջը մի բռնէք» (Վասպ. Զեռ. Ե. Լալա., էջ 489):

*

«Աղաչեմ եւ դուրս եւ մեծարանս տանիլ սմա... մի՛ մրճոտիլ, մի՛ պատուիլ, մի՛ մերկ ընկենուլ» (Ալիշան, Սիսուան, էջ 147):

*

«Հոգ տանիք լաւ պահէք զսուրբ աւետարանս ի ջրոյ ի հրոյ եւ ի տգիտոց ձեռքը չտայք, որ ասպականին զլուսանցսն եւ զժաղիկսն եւ զպատկերսն, եւ կամ թուրի եւ պատկեր կտրեն եւ կամ խաչ փորելով զթուղթսն ծակոտեն (Գ. Եպ. Սրուանձ., Թորոս Սղբ.):

*

«Սնամ տարէք զրոցս ի ժամանակի փախըստեան կամ խոովութեան զգիրք ի քաղաքն տարէք եւ պահեցէք, ի ժամանակի խաղաղութեան վանքն տարէք եւ ընթերցէք եւ մի աղխեալ եւ փակեալ պահէք զի գիրք փակեալ կուռք են» (նոյն):

*

«Աղաչեմ զՁեզ ով ընթերցող աստուածասէրք, բան մի խրատ տամ լսեցէք, գիրք ամանէթ ձեզ պահեցէք եւ կարդացէք. գերի երթայ նա՛ զարձուցէք, գէջ եւ կաթիլ տեղ մի դնէք, զմոմս ի վերայ մի կաթեցուցէք, թքոտ մատով թուղթ մի շրջէք եւ լրբութեամբ մի պատուէք» (Վասպ. Ե. Լալա., էջ 40):

*

«Դարձեալ աղաչեմ զՁեզ եղբարք որ սուրբ մաշթոցս վնասակար բանից պատրաստ պահեցէք թէ ջրէ եւ անձրեւէ կաթիլէ, թաց տեղէ կամ աւաղակէ»... Եթէ ոք յանդգնի զյիշատակս իմ ջնջեցէ ի յայս կեանս եւ զրկեալ լիցի ամենայն գոյականաւք». (Թովչեան, ցուցակ, էջ 49):